

## ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ (ԱՄՓՈՓ)

### Ա. Մասնավոր հատվածը՝ Հայաստանի տնտեսությունում և բիզնես միջավայրը

1. Մասնավոր հատվածը զգալի կարևոր դեր է կատարել Հայաստանի տնտեսությունում 1990-ականների սկզբից, երբ երկիրը նախաձեռնեց անցումը կենտրոնացված պլանայինից դեպի շուկայական տնտեսություն:<sup>1</sup> Մասնավոր հատվածի (ներառյալ օտարերկրյա սեփականություն հանդիսացող ընկերությունները) ներդրումը կազմել է Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 86%-ը<sup>2</sup> և ընդամենը զբաղվածների 78%-ը 2013թ.:<sup>3</sup> Մասնավոր հատվածի ներքին վարկավորումը 2003թ. ՀՆԱ-ի 6.3%-ից աճել է ՀՆԱ 44.7%՝ 2013թ., իսկ մասնավոր ներդրումները կազմել են հիմնական կապիտալի համախառն կուտակման զգալի մասը 2013թ.:<sup>4</sup> Օտարերկրյա մասնավոր ընկերությունները գործում են տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում, թողարկելով որոշ ոլորտներում արտադրանքի մեծ մասը:<sup>5</sup> 2013թ. սկզբի դրությամբ գործող բոլոր 21 բանկերն ունեցել են օտարերկրյա բաժնետերեր, դրանց մեծ մասում բաժնետերերի՝ կապիտալում մասնակցությունը եղել է կեսից ավելի:

2. Մասնավոր հատվածը գերազանցապես բաղկացած է փոքր (այդ թվում՝ գերփոքր) և միջին ձեռնարկություններից (ՓՄՁ), որոնք հանդիսանում են տնտեսական աճի և աշխատատեղերի ստեղծման հիմնական շարժիչը վերջին տարիներին: 2009թ. ՓՄՁ-ները կազմել են գրանցված առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընդամենի 98%-ը, և նպաստել արդյունաբերության ու ծառայությունների ընդամենը ավելացված արժեքի 43%-ին: Դրանց կշիռն ընդամենը զբաղվածությունում կազմել է 42.2%՝ 2009թ.:<sup>6</sup>

3. Պետական մասնավոր համագործակցությունը (ՊՄՀ) բավական հաջողված է Հայաստանում: Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում ՊՄՀ-ն հանգեցրել է ջրամատակարարման տևողության աճի և որակի բարելավման, եկամուտների հավաքագրման աճի (չնայած սակագների զգալի բարձրացմանը) և կառավարության սուբսիդիաների նվազմանը:<sup>7</sup> Հիմնականում ՊՄՀ շնորհիվ, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը վերջին տարիներին զգալի ընդլայնվել է, չնայած ցածր բազայից:<sup>8</sup> Ջրի, հեռահաղորդակցության,

<sup>1</sup> Սույն ամփոփումը հիմնված է Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) աշխատակազմի և խորհրդատուների կողմից իրականացված ուսումնասիրությունների և տարբեր այլ հիմնային փաստաթղթերի վրա: Տես նաև Տնտեսական վերլուծություն (ամփոփ) և Ներառական աճի նոթագրություն (հասանելի են Հավելված 2-ում տրված հղումներով փաստաթղթերի ցանկից):

<sup>2</sup> Հիմնական գներով, տվյալները 2010թ. համար են. Ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎԾ). 2012. *Հայաստանի ազգային հաշիվները, 2012*:

<sup>3</sup> ԱՎԾ, 2014. *Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2014*. Երևան:

<sup>4</sup> Համաշխարհային զարգացման ցուցանիշներ (<http://data.worldbank.org/data-catalog/world-development-indicators>).

<sup>5</sup> 2010.թ. դրանց տեսակարար կշիռները կորպորացիաների կողմից արտադրված ավելացված արժեքի մեջ կազմել է 97% մետաղագործությունում և հանքագործությունում, 68%՝ էլեկտրականության, գազի և ջրամատակարարման գործունեությունում, 64% տրանսպորտում ու հաղորդակցությունում և 52% ֆինանսական միջոցառությունում: ԱՎԾ. 2012. *Հայաստանի Ազգային հաշիվները, 2012*: .

<sup>6</sup> Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (Երևանի գրասենյակ) և Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն, 2010. *Տեղեկագիրք. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում, 2007-2009*. Երևան, Ասոդիկ:

<sup>7</sup> Գ. Խաչատրյան. Պետական-մասնավոր համագործակցություն. Հայաստանի Հանրապետության ջրային ենթակառուցվածքների փորձը ([http://www.unecce.org/fileadmin/DAM/ceci/documents/2012/ppp/ppp\\_days/Business\\_Forum/Khachatryan.pdf](http://www.unecce.org/fileadmin/DAM/ceci/documents/2012/ppp/ppp_days/Business_Forum/Khachatryan.pdf)):

<sup>8</sup> Հայաստանի կառավարություն. 2014. *Հայաստանի Զարգացման ռազմավարություն 2025*. Երևան:

տրանսպորտի և էներգետիկայի ոլորտների ՊՄՀ ծրագրերում ընդհանուր ներդրումները կազմել են \$2.7 միլիարդ՝ 2013թ.:<sup>9</sup>

4. Վերջին մի քանի տարիներին Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել բիզնես միջավայրի բարելավման առումով:<sup>10</sup> Համապատասխանաբար, Հայաստանի դասակարգումը Համաշխարհային բանկի 2015 Doing Business զեկույցի բիզնեսի վարման ընդհանուր դյուրինությամբ 2014թ. 49-րդ տեղից բարձրացել է 45-րդը՝ 189 երկրներից:<sup>11</sup> Դիրքերը մասնավորապես բարձր են սեփականության գրանցման դյուրինության (7-րդ) և բիզնեսի սկսման (4-րդ), բայց բավական ցածր՝ միջսահմանային առևտրի (110-րդ), էլեկտրաէներգիայի ստացման (131-րդ) և պայմանագրերի կիրարկման (119-րդ) առումներով: Հերիթեյջ հիմնադրամի և Ուոլ Սթրիթ պարբերականի 2014թ. Տնտեսական ազատության ցուցիչով Հայաստանը դասակարգվում է 41-րդը՝ 186 երկրների թվում:<sup>12</sup>

## Բ. Մասնավոր հատվածի զարգացման խոչընդոտները

5. Չնայած բիզնես միջավայրի բարելավման վերջին տարիների հաջողություններին, բազմաթիվ գործոններ դեռևս խոչընդոտում են ամուր և արդյունավետ մասնավոր հատվածի զարգացմանը Հայաստանում: Դրանց թվում են կառավարման խնդիրները և ոչ բավարար ներքին և արտաքին միացնելիությունները:

6. **Կառավարում:** Մասնավոր հատվածի, հատկապես ՓՄՁ զարգացմանը խանգարող կառավարման խնդիրները, ներառում են կոռուպցիան (հատկապես հարկային և մաքսային վարչարարությունում և արդարադատությունում), որոշ պետական պաշտոնյաների և մասնավոր բիզնեսի կապերը, փոխկապվածություն ունեցող բիզնեսմենների (օլիգարխներ) կողմից որոշ ոլորտներում գերակշիռ դիրքը և որպես դրա արդյունք՝ արդար մրցակցության պակասը, օրենքների ու կանոնակարգերի ընտրողական կիրարկումը (հատկապես հարկերին, պայմանագրերի կիրարկմանը և սնանկությանը վերաբերող):<sup>13</sup> Թրանսփարենսի Ինտերնեյշնլի 2013թ. Կոռուպցիայի ընկալման համաթիվով Հայաստանը դասակարգվում է 94-րդը՝ 177 երկրների թվում:<sup>14</sup> Համաշխարհային բանկի Համաշխարհային կառավարման ցուցանիշների մեծ մասում Հայաստանի տոկոսային դասակարգումը 2009 և 2011 թվականների միջև վատացել

<sup>9</sup> Համաշխարհային բանկ. Մասնավոր մասնակցությունը ենթակառուցվածքներում, Տվյալների բազա (<http://ppi.worldbank.org>).

<sup>10</sup> Օրինակ, այն սկսել է Կարգավորիչ գիյոտին ծրագիրը, որի նպատակն է բիզնեսի կարգավորումների պարզեցումը, նվազեցրել է լիցենզավորման ենթակա բիզնես գործունեությունների քանակը, ներդրել է մեկ կանգառի սկզբունքի վրա հիմնված բիզնեսի էլեկտրոնային գրանցման համակարգ և իրականացրել այլ միջոցառումներ. Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկ (ՎԶԵԲ). *Անցումային զեկույցներ*:

<sup>11</sup> Համաշխարհային բանկ. *Doing Business զեկույցներ* 2014 և 2015. Վաշինգտոն:

<sup>12</sup> Հերիթեյջ Հիմնադրամ և Ուոլ Սթրիթ պարբերական. Տնտեսական ազատության ինդեքս 2014.

<sup>13</sup> Կառավարման այս խնդիրներն արտացոլված են ԱԶԲ. 2012. *Վավերացման զեկույց – Հայաստան, Երկրի 2006-2011թթ. Գործառնությունների վերջնական վերանայման վավերացում*, Մանիլա; ՎԶԵԲ. 2012. *Հայաստանի առևտրային օրենքները. ՎԶԵԲ-ի գնահատումը*; Հայաստանի Կառավարություն. 2014. *Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր*, Երևան; Հերիթեյջ Հիմնադրամ և Ուոլ Սթրիթ պարբերական. Տնտեսական ազատության ինդեքս 2014; Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ). *Հայաստանի Հանրապետություն. Աշխատակազմի Զեկույցը Հոդված IV-ի խորհրդակցությունների վերաբերյալ*; Ամերիկայի Միացյալ Նահանգների (ԱՄՆ) Կոմերցիոն ծառայություն և ԱՄՆ Պետությանարտամեքս. 2011. *Բիզնեսի վարումը Հայաստանում. 2011. Երկրի կոմերցիոն ուղեցույց ԱՄՆ ընկերությունների համար*, ինչպես նաև տարբեր միջազգային և տեղական «ուղեղային կենտրոններ» (think-tanks) հրապարակումներ: .

<sup>14</sup> Թրանսփարենսի Ինտերնեյշնլ. Կոռուպցիայի ընկալման համաթիվ 2013 (<http://cpi.transparency.org/cpi2013/results>):

է. կոռուպցիայի դեմ պայքարի տոկոսային դասակարգումը 33.5%-ից նվազել է 29.9%.<sup>15</sup> Վերականգնման և Զարգացման Եվրոպական բանկի (ՎԶԵԲ)՝ Բիզնես միջավայրի և ձեռնարկությունների կատարողականի համաշխարհային հետազոտության համաձայն, մասնակից կազմակերպությունների միայն մեկ երրորդն է համարել որ Հայաստանում դատարաններն արդար ու անկողմնակալ են:<sup>16</sup> Կառավարման խնդիրները հիմնական պատճառն են թե ինչու է ոչ ֆորմալ տնտեսությունը Հայաստանում հարաբերականորեն բարձր:<sup>17</sup>

7. **Կապակցում.** Լավ կապակցումը երկրի ներսում և մնացած աշխարհի հետ հատկապես կարևոր է Հայաստանում մասնավոր հատվածի զարգացման (ՄՀԶ) համար, հաշվի առնելով փոքր տարածքը: Այնուհանդերձ, թե ներքին և թե միջազգային կապակցումն ոչ բավարար է՝ երկրի ցամաքով շրջապատված լինելու, լեռնային տեղանքի ու աշխարհաքաղաքական սահմանափակումների և տրանսպորտային ցանցի թերությունների պատճառով: Հայաստանը Վրաստանին կապող երկաթուղին ներկայումս Հայաստանի միակ երկաթուղային հաղորդակցությունն է արտաքին աշխարհի հետ, բայց այդ երկաթուղու բազմաթիվ հատվածներ վատ վիճակում են: Նույնը նաև Հայաստանը Վրաստանին ու Իրանին կապող միջազգային ճանապարհների բազմաթիվ հատվածների և Հայաստանի տարբեր հատվածներ միմյանց ու միջազգային ճապարհներին կապող ճանապարհների առումով:<sup>18</sup>

8. Ներքին և միջազգային ոչ բավարար կապակցումներն ավելացնում են Հայաստանում բիզնեսի վարման ծախքերը և հարաբերականորեն դժվարացնում տեղական բիզնեսի՝ մասշտաբի էֆեկտին հասնելն ու համաշխարհային արժեշտիներին ինտեգրումը: Այն մասնակիորեն հետևանք է ոչ բավարար ներքին կապակցման, այն որ բնակչությունն ու տնտեսական ակտիվությունը (ներառյալ մասնավոր հատվածն ու ՓՄՁ-ն) կենտրոնացած են Երևանում:<sup>19</sup> Ոչ բավարար միջազգային կապակցումներով է հիմնականում բացատրվում թե ինչու են Հայաստանում միջազգային փոխադրումներն այդքան թանկ և ժամանակատար: 20 ֆուտ կոնտեյնրի ներմուծման միջին ծախսը Հայաստանում կազմում է \$2175 (համեմատած Վրաստանի \$1595 և Սինգապուրի \$440 հետ), իսկ դրա առաքման պահանջվող ժամանակը՝ 18 օր (համեմատած Վրաստանի 10 օրվա և Սինգապուրի 4 օրվա հետ), համաձայն Doing Business 2015 զեկույցի:

9. **Այլ գործոններ.** Հայաստանում ՄՀԶ վրա ազդում է նաև ոչ ֆորմալ հատվածում բիզնես պրակտիկան, ՓՄՁ-ների հարաբերականորեն բարձր հարկային բեռը (մասնակիորեն՝ խոշոր, լավ կապեր ունեցող բիզնեսների կողմից հարկերից խուսափելու պատճառով), ֆինանսների հասանելիության դժվարությունները (մասնավորապես ՓՄՁ-ների համար), լոգիստիկ ծառայությունների ցածր որակը, իրական փոխարժեքի գերարժևորումը, և առևտրի

<sup>15</sup> Համաշխարհային Բանկ. Կառավարման համաշխարհային ցուցանիշներ (<http://info.worldbank.org/governance/wgi>):

<sup>16</sup> ՎԶԵԲ. 2012. *Հայաստանի կոմերցիոն օրենքները. ՎԶԵԲ-ի գնահատումը*. Լոնդոն:

<sup>17</sup> Ոչ ֆորմալ տնտեսությունը կազմել է ՀՆԱ 35%-ը՝ 2008թ., բարձր քան ուսումնասիրության մեջ ներառված ցանկացած այլ երկրում (Ադրբեջան, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստանի Հանրապետություն և Տաջիկստան). Հայաստանի ոչ ֆորմալ տնտեսության չափը բացատրող հիմնական գործոններն էին. ֆինանսական և արտադրանքի շուկաների կարգավորման բեռը և ինստիտուցիոնալ որակը: ԱՄՆ. *Չափելով Ոչ Ֆորմալ Տնտեսությունը Կովկասում և Կենտրոնական Ասիայում*, ԱՄՆ Աշխատանքային փաստաթուղթ No. WP/13/137.:

<sup>18</sup> Տրանսպորտի ոլորտի գնահատում (ամփոփ), հասանելի է Հավելված 2-ում տրված հղումներով փաստաթղթերի ցանկից:

<sup>19</sup> Մայրաքաղաքի բնակչությունը կազմել է երկրի ընդամենի 35%-ը 2012թ.: 2013թ. առաջին կեսին մայրաքաղաքի մասնաբաժինը կազմել է արդյունաբերական արտադրության ավելի քան 40%-ը (ԱՎԾ. *Սոցիալ-տնտեսական զեկույց, հունվար – հունիս*, 2013):

ֆինանսական, տեղեկատվական ու տեխնիկական խոչընդոտները:<sup>20</sup> Էլեկտրաէներգիայի բարձր ծախսերը և/կամ անհուսալի մատակարարումը հավանական է որ դառնան Հայաստանում միջնաժամկետ ՄՀԶ-ն զսպող սահմանափակում, եթե Հայաստանը չբարձրացնի իր էներգետիկ անվտանգությունը:

#### **Գ. Կառավարության՝ մասնավոր հատվածի զարգացման ռազմավարությունը**

10. Կառավարությունը կենսական կարևորություն է տալիս ՓՄՁ զարգացմանը աշխատատեղերի ստեղծման, կենսապայմանների բարելավման և աղքատության նվազեցման առումներով: Այն նաև ընդունում է, որ դեռևս շատ բաներ իրականացնելու կարիք կա Հայաստանում ՄՀԶ համար բարենպաստ միջավայր ստեղծելու համար և, որ ՊՄՀ-ն կարող է զգալի ներդրում ունենալ երկրի տնտեսական զարգացման մեջ: Ըստ այդմ, Կառավարությունը մտադիր է շարունակել բիզնես միջավայրի բարելավման իր նախորդ ջանքերը, խթանել ՓՄՁ զարգացումը և արդյունավետ դարձնել ՊՄՀ կիրառությունը: Հայաստանի Զարգացման Ռազմավարություն 2025-ը սահմանում է քաղաքականությունների և միջոցառումների լայն շրջանակ, որոնք նպատակ ունեն հետագա բարելավել բիզնես միջավայրը, ներառյալ բիզնես կանոնակարգերի պարզեցումը, էլ-կառավարման զարգացումը, տեսչական համակարգի օպտիմալացումը, արդարադատության համակարգի արդիականացումը, երկրի ներքին և արտաքին տրանսպորտային կապերի բարելավումը և էներգամատակարարման հուսալիության բարձրացումը:<sup>21</sup> Ռազմավարությունը նախատեսում է նաև թիրախային աջակցություն որոշ ոլորտներին, ինչպիսիք են արտահանմանն ուղղված և տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերությունները, զբոսաշրջությունը, գյուղատնտեսությունը և ՓՄՁ-ն (հատկապես Երևանից դուրս գործող ՓՄՁ-ներն ու կանանց կամ երիտասարդներին պատկանող ՓՄՁ-ները): Ավելին, ռազմավարությունը նախատեսում է ՊՄՀ ավելի լայն կիրառություն՝, զարգացնելու համար զբոսաշրջության ու տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտները, ձևավորելու և զարգացնելու ազատ տնտեսական գոտիները և խթանելու արտահանումը:

11. Նոր կառավարության ծրագիրը,<sup>22</sup> միջնաժամկետ գործողությունների պլանը, սահմանում է բիզնես միջավայրի բարելավման լրացուցիչ և առանձնահատուկ միջոցառումները:<sup>23</sup> Կառավարության մեկ այլ կարևոր փաստաթուղթ, որը զգալի առնչություն ունի ՄՀԶ հետ, Արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունն է, որը հաստատվել է 2011թ.: Այս փաստաթուղթը սահմանում է կառավարության արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունները, սկզբունքները և գործիքները և նպատակ ունի ապահովել կառավարության կողմից օգտագործվող բոլոր գործողությունների ու գործիքների ռազմավարական շրջանակը՝ խթանելու տնտեսության իրական հատվածի (ներառյալ ՓՄՁ-ն) զարգացումը և արտահանման ընդլայնումն ու դիվերսիֆիկացիան: Այն նախատեսում է կառավարության և մասնավոր հատվածի համագործակցություն ոլորտային ռազմավարությունների իրականացման համար,

<sup>20</sup> ՎՋԵԲ, ԱՄՀ, Համաշխարհային բանկ և «ուղեղային կենտրոնների» հրապարակումներ (առկա է հարցման դեպքում):

<sup>21</sup> Հայաստանի կառավարություն. 2014. *Հայաստանի Զարգացման ռազմավարություն 2025*. Երևան:

<sup>22</sup> Հայաստանի Կառավարություն. 2014. *Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագիր*. Երևան:

<sup>23</sup> Դրանց թվում են, Կարգավորիչ գիյոտինի շարունակությունը, շինարարական թույլտվությունների համար էլեկտրոնային համակարգի ներդրումը, կոմունալ ծառայությունների հասանելիության համար բիզնեսին անհրաժեշտ ժամանակի կրճատումը, տեսչական գործակալությունների քանակի կրճատումը, բիզնեսի օրենսդրության սերտացումը Եվրոպական ստանդարտներին, մրցակցության քաղաքականությունների ավելի արդյունավետ կիրառումը և արտահանման ապահովագրության ընկերության հիմնումը:.

բիզնես միջավայրի կատարելագործում՝ կարգավորող դաշտի և ֆիզիկական ենթակառուցվածքի բարելավումների միջոցով և Կառավարության աջակցություն արտահանման ներուժ ունեցող կազմակերպություններին (մասնավորապես ՓՄՁ-ներին):<sup>24</sup> Այսպիսով, կառավարության այս բոլոր փաստաթղթերը տալիս են (տարբեր աստիճանի) Հայաստանում ՄՀՁ հիմնական խոչընդոտները, ներառյալ կառավարման խնդիրներն ու ոչ բավարար ներքին և միջազգային կապակցումները: Կառավարության համար հիմնական մարտահրավերը գործողությունների պլանի իրականացումն է և ռազմավարությունների արդյունավետ կիրարկումը: Կառավարման ոտոռ խնդիրների լուծումը (ինչպիսիք են կոռուպցիան և օլիգարխների գերիշխումը) հատկապես մարտահրավերային է և պահանջում է խիստ քաղաքական կամք:

## Դ. ԱԶԲ փորձառությունն ու ռազմավարությունը

12. **Նախորդ ծրագիրը:** Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) Հայաստանի միջանկյալ գործառնական ռազմավարությունը (ՄԳՌ), որը հաստատվել էր 2006թ. և ուղղորդում էր երկրի համար ԱԶԲ գործառնությունները 2006-2012թթ., նպատակ ուներ խթանել մասնավոր հատվածի զարգացումը՝ առաջնայնորեն խթանելով ֆինանսական հատվածի զարգացումը:<sup>25</sup> 2006-2013թթ. մասնավոր հատվածի երեք ծրագրերի համար ԱԶԲ-ն հաստատեց \$130 միլիոն վարկ և կարողությունների ձևավորման \$575,000 տեխնիկական աջակցություն (SU) նպատակ ունենալով խթանել ՄՀՁ-ը առցանց բիզնես ռեգիստրի ստեղծմամբ:<sup>26</sup> Այս ժամանակարնթացքում, ԱԶԲ-ն իրականացրեց նաև մի շարք տարածաշրջանային SU ծրագրեր, որոնք ներառում էին Հայաստանն ու նպատակ ունեին աջակցել ՄՀՁ-ն:<sup>27</sup>

13. ՄԳՌ վերջնական վերանայման եզրահանգմամբ, ՄՀՁ աջակցության ՄԳՌ մոտեցումը՝ կարող էր ավելի սերտորեն կապակցվել կառավարության առաջնահերթությունների հետ՝ նպատակ ունենալով բարելավել բիզնես միջավայրը՝ ֆինանսական հատվածի զարգացումը թիրախավորելու փոխարեն: Բոլոր ծրագրերը (ներառյալ տարածաշրջանային SU ներքո իրականացվող), որոնց արդյունավետությունը հնարավոր էր գնահատել 2012թ., գնահատվել էին արդյունավետ՝ ծրագրերի ակնկալվող վերջնարդյունքներին հասնելու առումով:<sup>28</sup> Չնայած վերջնական վերանայման որոշ գնահատականների հետ անհամաձայնությանը, վերջնական վերանայման Վավերացման զեկույցի ամփոփմամբ՝ ԱԶԲ մասնավոր հատվածի գործառնությունները Հայաստանում համապատասխանում էին երկրի մասնավոր հատվածի ենթակառուցվածքների կարիքներին և կապակցված էին ԱԶԲ՝ գյուղական ձեռնարկությունների ֆինանսավորման ու ֆինանսական շուկայի խորացմանն օժանդակության նպատակին: Հայաստանում ԱԶԲ հետագա ռազմավարության ու ծրագրի համար Վավերացման զեկույցի երաշխավորություններից մեկը մասնավոր հատվածի գործառնությունների ընդլայնումն էր:<sup>29</sup>

<sup>24</sup> Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն. 2011. *Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարություն*. Երևան:

<sup>25</sup> ԱԶԲ. 2006. Հայաստան. *Տնտեսական զեկույց և միջանկյալ գործառնական ռազմավարություն, 2006-2009*. Մանիլա:

<sup>26</sup> Վարկերն էին. Սևան-Հրազդան Կասկադ հիդրոէլեկտրակայանների համակարգի վերակազմման, Փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման և Զվարթնոց օդանավակայանի ընդլայնման ծրագրերը: SU ծրագիրը վերաբերել է բիզնես միջավայրի բարելավման ինստիտուցիոնալ արդիականացմանը:

<sup>27</sup> Կարողությունների ձևավորում՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում ֆինանսական հաստատությունների և ֆինանսական հանրայնացման ստանդարտների ամրապնդման համար: .

<sup>28</sup> ԱԶԲ. 2012. *Երկրի Ռազմավարության վերջնական վերանայում. Հայաստան (2006-2011)*. Մանիլա

<sup>29</sup> ԱԶԲ. 2012. *Վավերացման զեկույց—Հայաստան. Երկրի 2006-2011թթ. գործառնությունների վերջնական վերանայման վավերացում*. Մանիլա:

**14. Պետական և մասնավոր հատվածի ապագա վարկավորումը:** ԱԶԲ պետական հատվածի գործառնությունները կձգտեն ամրապնդել ՄՀԶ համար նպաստավոր միջավայրը՝ նպաստելով արտաքին և ներքին կապակցումներին, զարգացնելով երկրորդային քաղաքային բնակավայրերն և բարձրացնելով էներգետիկ անվտանգությունը: ԱԶԲ-ն առաջնահերթություն կտա մասնավոր հատվածի մասնակցությանը, որտեղ հնարավոր է, աջակցելու կառավարությանն իրականացնելու պետական ներդրումների հավակնոտ ծրագիրը, մինչև մի Ժամանակ պահպանելով ընդհանուր պարտքն օրենսդրական սահմանաչափի մեջ: ԱԶԲ-ն ֆինանսական աջակցություն կտրամադրի ոչ սուվերեն ծրագրերին, որոնցում ԱԶԲ-ն կարող է նպաստել ավելացված արժեքին և լծորդել (leverage) երրորդ կողմի ֆինանսավորմանը: ԱԶԲ մասնավոր հատվածի գործողությունները կարող են տեղի ունենալ էներգետիկայի,<sup>30</sup> տրանսպորտի և արտահանման արդյունաբերություններում և որտեղ հարակից ներքին բիզնեսների ձևավորումը կարող է տնտեսության համար լինել տրանսֆորմացիոն:<sup>31</sup> ԱԶԲ մասնակցությունը մասնավոր հատվածի գործառնություններին կլինի առանցքային խթանելու համար բնապահպանական և սոցիալական լավագույն պրակտիկաների մասին իրազեկվածության բարձրացումն ու արդիական տեխնոլոգիաների օգտագործումը: ԱԶԲ-ն կուսումնասիրի և հնարավորության դեպքում, կօգնի կառավարությանը մշակել տրանսպորտի, էներգետիկայի, զբոսաշրջության և տեղեկատվական տեխնոլոգիաների, ինչպես նաև մուլտիցիպալ ծառայությունների տրամադրման (հատկապես երկրորդային քաղաքներում) ՊՄՀ-ները:

**15. Գիտելիքային պրոդուկտներ և ծառայություններ:** ԱԶԲ քաղաքականության վերլուծության և խորհրդատվական ծառայությունները կօգնեն բարելավել բիզնես միջավայրը, խթանել ՓՄՁ զարգացումը, ներգրավել ուղղակի ներդրումներ, զարգացնել գիտելիքային տնտեսությունը և արդյունավետ օգտագործել ՊՄՀ-ն: ԱԶԲ ներկայությունը մասնավոր հատվածի գործառնություններում կօժանդակի միջազգային Պատշաճ ուսումնասիրության (due diligence), կառավարման և թափանցիկության չափանիշների կիրառմանը: Հայաստանում քաղաքականության միջավայրի հետագա ամրապնդման համար, ԱԶԲ քաղաքական երկխոսությունը, այլից զատ, կներառի ՊՄՀ արդյունավետ տրանսակցիաների համար օրենսդրական և կարգավորման շրջանակին առնչվող խնդիրները, հատկապես՝ երկրում կենտրոնացված ՊՄՀ հատուկ միավոր հիմնելու առավելությունները: Քաղաքականության երկխոսությունը կներառի ՄՀԶ-ն և ՊՄՀ առնչվող այլ սահմանափակումների վերացման միջոցառումներն ու քաղաքականությունները, որոնք վեր են հանվել ԱԶԲ դիագնոստիկ ուսումնասիրությանը:<sup>32</sup>

<sup>30</sup> 2013թ. սկզբին ԱԶԲ-ն հաստատեց ոչ սուվերեն վարկ (\$25 միլիոն) Միջազգային էներգետիկ կորպորացիային՝ Սևան-Հրազդան Կասկադ հիդրոէլեկտրակայանների համակարգի վերակազմման ծրագրի համար:

<sup>31</sup> Ֆինանսների ոլորտում, այլ գործունեություններից բացի, ԱԶԲ-ն կարող է փնտրել հնարավորություններ ֆինանսների հասանելիության (հատկապես ՓՄՁ կողմից) և ոչ բանկային ֆինանսական հաստատություններում հնարավոր ներդրումների համար:

<sup>32</sup> Հայաստանի ՊՄՀ գնահատման և հնարավորությունների զեկույցը գնահատում է երկրում ՊՄՀ առկա միջավայրը և վեր հանում ԱԶԲ ապագա միջամտությունների համար հիմնական սահմանափակումներն ու գործողությունները: .